

71 Ուստի երանելիս այս Մեսրոպ բարձեալ բերեր զաւանդելոցն պատիւ ի փառս ամենեցունց Տեառնն, եւ զամենայն աշակերտեալսն իւր ի նոյն հանդէս յորդորեր. եւ այնպէս յառաջադէմ ամենայն աստուածահաճոյ վարուք եւ հաւատոյ վայելչութեամբք լցեալք պատրաստեալք եւ ամեթացեալք ի բազում ժամանակս աշակերտեալք առ ի նմանէ, նովին ի նոյն կանխեալք եւ ի նմին հանապազորդեալք ի փառս ամենասուրբ Երրորդութեանն:

72 Յայնժամ արք ոմանք հալածեալք ի ժողովոյն Եփեսոսի, որում աւնուն էր Թեոդորոս, ըստ Պաւղոսի Սամոստացոյ եւ ըստ Նեստորի հերձուածոյն գիրս ստացեալ համաձայնս պարզամտացն եւ դիւրահաւանիցն, եւ եկեալ յաշխարհս մեր՝ կամէին ուսուցանել զչար աղանդն: 73 Վասն որոյ ի սուրբ ժողովոյն առաքեալ թուղթս ազդ առէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ եւ Մեսրոպայ: 74 Եւ նոցա ճշմարտապէս փութով զկամակոր հերձուածողնսն ի բաց հալածեալ յիւրեանց աշխարհէն, զի մի ինչ ի լուսաւոր վարդապետութիւնն՝ ծուխ ինչ սատանայական մերձեսցի:

75 Յետ այնորիկ դէպ լինէր փոխել յաշխարհէս երանելւոյն սրբոյն Սահակայ հայրապետին հայոց՝ ճշմարիտ վարուք եւ ուղղափառ հաւատով, լցեալ աւուրք եւ երկայնակեաց ժամանակաւք վայելեցուցեալ զամենայն աշխարհս հայոց ի լուսաւոր վարդապետութիւնն, այնպէս հանգեաւ ի Զրիստոս, յառաջնում ամի երկրորդ Յազկերտի որդւոյ Վռամայ թագաւորին Պարսից, ի Բագրեւանդ գաւառի ի գելըն Բլուր, ի կատարել ամսոյն Նաւասարդի, յերրորդ ժամու աւուրն պաշտամալն, որ եւ զաւր ծննդեան ի նոյն աւուր: 76 Եւ այնպէս զամբիծ հոգին սաղմոսերգութեամբ եւ աղաւթիւք ծերունւոյն աւանդեալ զհոգին ի Զրիստոս, ասէ, Ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ, ըստ նախավկային բանի:

77 Ըստ նմին աւրինակի եւ նորա ապսպարեալ զանձն եւ զմնացեալսն զիւր զհաւտն ամենապահ շնորհացն Աստուծոյ յանձն արարեալ՝ այնպէս փոխեցաւ յաշխարհէս: 78 Չոր առեալ վաղվաղակի պարսպէին հանդերձակաւք ըստ խորհրդածութեան քահանայապետութեան թաղմանն՝ իւր իսկ ձեռասուն աշակերտքն. որոյ առաջնոյն Երեմիա անուն, այր սուրբ եւ երկելդած յԱստուծոյ. եւ այդք ընդ նմա, հանդերձ կնան Վարդանայ Մամիկոնեի. եւ բարձեալ զմարմին երանելւոյն բազում ամբոխիւ, եպիսկոպոսաւք եւ քահանայիւք, սարկաւագաւք եւ դպրաւք, սաղմոսիւք եւ աւրինութեամբ եւ երգաւք հոգեւորաւք՝ ածին ի Տարան գաւառ ի գելըն Յաշտիշատ. եւ անդ ի մարտիրոսական խորանին յարկեղս սրբոցն հանգուցանէին զսրբոյ առն Աստուծոյ զնշխարսն հանդերձ ամենայն պատուով. եւ կնքեալ քրիստոսանշան կնքովն, եւ զյիշատակ սրբոյն կատարեալ ի փառս եւ ի գովութիւն Աստուծոյ, այնուհետեւ յիւրաքանչիւրսն դառնային. զորոյ եւ զտաւն յիշատակի սրբոյն տաւնախմբէն յերեսուն Նաւասարդի ամսեանն բազում ժողովովք. եւ